Ծանուցագիր ԿՊ/93/2018/փԾ

Քաղաքացի **ՍՎԵՏԼԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՐԳՍԻ**

(անուն, հայրանուն, ազգանուն)

Բնակության (հաշվառման) հասցե **ԵՐԵՎԱՆ, ՇԵՆԳԱՎԻԹ, ՇԱՐՈՒՐԻ Փ., 28/2Շ, 88ԲՆ**

(բնակության կամ հաշվառման հասցեն)

Քաղաքացուն նույնականացնող տվյալ **5808540453**

(անձնագրի սերիա/համար, կամ հանրային ծառայության համար կամ նույնականացման քարտի համար)

Հարգելի քաղաքացի

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 44-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջները՝ ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի կողմից ստացված տեղեկությունների (այսուհետ՝ Տեղեկություններ) հետ Ձեզ ծանոթացնելու, համապատասխան բացատրություններ ներկայացնելու համար հնարավորություն ընձեռելու և ՀՀ օրենսդրությանը իրազեկելու նպատակով հայտնվում է.

1. Տեղեկությունների համաձայն Ձեր կողմից օտարվել է՝

օտարվել է **2016-06-30** Օտարման ամսաթիվ	**Երևան, Էրեբունի Նոր Արեշ 14 փողոց 38ա շենք, 30 բնակարան** օտարված անշարժ գույք	**10,500,000** Գույքի պայմանագրային արժեք	ՀՀ դրամ
		1,737,818 Կադաստրային արժեք	ՀՀ դրամ

2. Տեղեկությունների համաձայն Ձեր կողմից օտարվել է՝

օտարվել է **2016-07-14** Օտարման ամսաթիվ	**Երևան, Շենգավիթ Շարուրի փողոց 28/2 շենք, 88 բնակարան** օտարված անշարժ գույք	**8,500,000** Գույքի պայմանագրային արժեք	ՀՀ դրամ
		1,354,091 Կադաստրային արժեք	ՀՀ դրամ

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն՝ մեկ օրացույցային տարվա ընթացքում **երկու և ավելի թվով** անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ **բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակ.), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի**՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում **երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի** օտարումը,եթե օտարումը կատարվում է **տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում:**

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3.1-րդ հոդվածին համապատասխան Դուք կամ վերը նշված գույքի սեփականությունում բաժնեմաս ունեցող այլ անձը հանդիսանալով ԱԱՀ վճարման պարտավորություն կրող՝ պարտավոր եք ՀՀ կառավարության 2009թ. Փետրվարի 19 - ի «Ֆիզիկական անձի իրականացրած գործարքների մասով ավելացված արժեքի հարկի հաշվարկները ներկայացնելու, գումարների վճարման կարգը և ժամկետները սահմանելու մասին» թիվ 199-Ն որոշմամբ հաստատված կարգով հարկային մարմին ներկայացնել ԱԱՀ-ի հաշվարկ և վճարել դրա արդյունքում առաջացող հարկային պարտավորությունների գումարը:

Ընդ որում, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ մեկից ավելի անձանց ընդհանուր սեփականությունը հանդիսացող գույքի օտարման դեպքում ԱԱՀ-ի շեմը կիրառվում է մեկ անգամ՝ անկախ պայմանագրով գույք օտարող կողմում հանդես եկող անձանց թվաքանակից կամ այդ գույքի նկատմամբ սեփականություն ունեցողների թվաքանակից: Ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի օտարման գործարքից առաջացող ավելացված արժեքի հարկի պարտավորության մասով գույքի սեփականությունում բաժնեմաս ունեցողները կրում են համապարտ պարտավորություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ հարկային տեսչություն Ձեր կամ կամ վերը նշված գույքի սեփականությունում բաժնեմաս ունեցող այլ անձի կողմից ԱԱՀ-ի հաշվարկ չի ներկայացվել:

Վերը նշված հաշվարկը չներկայացնելու արդյունքում՝ այլ հավասար պայմաններում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկման ենթակա հարկային պարտավորության գումարը **09/02/2018** թվականի դրությամբ կազմում է

3,609,680	**1,416,950**	**775,780**	**1,416,950**
ԸՆԴԱՄԵՆԸ վճարման ենթակա	**հարկի գումար**	**տույժ**	**տուգանք**

Առաջարկում ենք 5 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ԿԱ ՊԵԿ Հարկ Վճարողների Սպասարկման Վարչության Ձեր հաշվառման հասցեն սպասարկող բաժին ներկայացնել համապատասխան հաշվարկը ու վերոնշյալ գործարքը հաստատող համապատասխան փաստաթղթերի (անշարժ գույքի օտարման պայմանագրերի, սեփականության իրավունքը հաստատող և այլ փաստաթղթերի) պատճենները:

Օրենսգիրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Դուք իրավունք ունեք հարկային մարմին ներկայացնել բացատրություններ:

ՓՀՎ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ**

Կազմման ամսաթիվ 09/02/2018

Կատարող հ/տ Կ.Մուրադյան
Հեռ. 011 54 40 55
Հեռ. 099 54 40 55
Էլ. փոստի հասցե phv_htv_verluc_1@taxservice.am